

Հայաստան

Հուլիս-սեպտեմբեր, 2021 թվական

ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է արձագանքել **Լեռնային Ղարաբաղի հակամարտության** ընթացքում տեղահանված անձանց կարիքներին՝ համակարգելով ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակի և Հայաստանի կառավարության հետ:

2021 թ. օգոստոսին ՄԱԿ ՓԳՀ-ն գործարկել է **իրավական հարցերով նոր թեժ գիծ**: Ավելի քան 200 հեռախոսազանգի միջոցով մտահոգության ներքո գտնվող անձինք բարձրացրել են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ սոցիալական աջակցության հասանելիության վերաբերյալ:

ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է առանցքային շահագրգիռ կողմերի **կարողությունների զարգացմանն ուղղված գործունեությունը**: Շուրջ 40 հանրային պաշտպան վերապատրաստվել է փախստականներին և ապաստան հայցողներին իրավական օգնություն տրամադրելու թեմայով:

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

9,875 անձանց հետ,


որոնք տեղահանվել են ԼՂ հակամարտության հետևանքով, կապ է հաստատվել իրավական պաշտպանության մոնիթորինգի 2,017 հարցազրույցի միջոցով, 2021 թ. հուլիսից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում: Մոտ 340 տեղահանված անձ բացահայտվել է լրացուցիչ օգնության և ծառայություններից օգտվելու համար ուղեգրման նպատակով:

Խաղաղ համակեցության 14 ծրագիր

և համայնքապետ կազմակերպությունների աջակցության 5 ծրագիր իրականացվել են հաշվետու ժամանակահատվածում: ԽՀԾ-ները ներառել են տեխնիկական աջակցության տրամադրում, մանկական խաղահրապարակների և մարզադաշտերի շինարարություն: Շուրջ **200 տեղահանված կանայք և երեխաներ** օգտվել են համայնքապետ կազմակերպությունների աջակցությունից:

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ (2021 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ)

Ֆինանսական պահանջներ 15.4 մլն ԱՄՆ դոլար
Ֆինանսավորված 60% 9.3 մլն



Պակասող ֆինանսավորում 40%
6.1 մլն



Կոտ դ'Իվուարից փախստականը մարզում է պատանի ֆուտբոլիստների իր թիմը Թեղուտ գյուղում, 2021 թ. օգոստոս. © ՄԱԿ ՓԳՀ/Անահիտ Չայրապետյան

ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ* 2021 Թ. ՀՈՒԼԻՍԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

Փախստականների նման...	42,023
Փախստականներ	3,401
Ապաստան հայցողներ	144
Քաղաքացիություն չունեցող անձինք	892

*Աղբյուր՝ ՄԱԿ ՓԳՀ-ի կիսամյակային վիճակագրական հաշվետվություն, 2021 թ. հուլիս

** Այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքով փախստականի նման իրավիճակում գտնվող 36,989 անձ, և փախստականի նման իրավիճակում գտնվող 4,461 սիրիահայ, որոնք ապրում են Հայաստանում և ստանում օժանդակություն ՄԱԿ ՓԳՀ-ից:

Գործառնական համատեքստ

2020 թ. սեպտեմբերի 27-ին բախումներ բռնկվեցին շփման գծի երկայնքով և տարածվեցին այլ շրջաններում, մինչև նոյեմբերի 9-ին ստորագրված հրադադարի մասին հայտարարությունը վերջ դրեց Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) շուրջ զինված բախումներին: Հակամարտության հետևանքով տեղահանված շուրջ **90,000 անձ** տեղահանվեց Հայաստան: Ըստ գնահատականների՝ 2021 թ. հուլիսի դրությամբ Հայաստանում փախստականների իրավիճակում մնացել է մոտ **36,989** անձ: ՄԱԿ ՓԳՅ-ն շարունակում է բավարարել տեղահանված անձանց կարիքները՝ ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ, այդ թվում՝ [Միջգործակալական արձագանքման ծրագրի](#) շրջանակներում:

2021 թ. հունվարից մինչև սեպտեմբեր 151 ապաստան հայցող Իրանից, Սիրիայից, Հնդկաստանից, Իրաքից, Հորդանանից և այլ երկրներից դիմել են Հայաստանում իրավական պաշտպանություն ստանալու համար: Փաստաթղթերով, կացարանով ապահովվումը, արժանապատիվ աշխատանքը և կենսապահովման պայմանների բարելավումը մնում են ապաստան հայցողների և փախստականների առավել հրատապ կարիքների շարքում: Հակամարտության սրացմանը զուգահեռ ընթացող COVID-19 համավարակն է՛լ ավելի խորացրեց Հայաստանի դժվարին սոցիալ-տնտեսական իրավիճակով պայմանավորված խնդիրները:

ՄԱԿ ՓԳՅ-ն և գործընկերներն աշխատում են պաշտպանության միջավայրի բարելավման ուղղությամբ՝ միևնույն ժամանակ աջակցություն ցուցաբերելով նրանց, ովքեր առավելագույն ռիսկի են ենթարկվում: ՄԱԿ ՓԳՅ-ն շարունակում է նպաստել մտահոգության ներքո գտնվող անձանց ազգային արձագանքման ծրագրերում ընդգրկման գործին, ներառյալ COVID-19-ից վերականգնման և վարակի դեմ պատվաստման ծրագրերը և այլ օրենսդրական ու վարչական բարեփոխումները:



ԼՂ հակամարտության հետևանքով տեղահանված երեխաները խաղում են տեղացի երեխաների հետ ՄԱԿ ՓԳՅ-ի կողմից կառուցված իրենց նոր խաղահրապարակում: Գորիս, Սյունիքի մարզ, 2021 թ. սեպտեմբեր © ՄԱԿ ՓԳՅ / Անահիտ Հայրապետյան

Թարմացված տեղեկություններ ձեռքբերումների վերաբերյալ

Ձեռքբերումներ. 2021 թ. հունիս-սեպտեմբեր



2021 թ. օգոստոսին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ ստորագրված **Փոխըմբռնման հուշագրի շրջանակում** սեպտեմբեր ամսվա դրությամբ 54 տնային տնտեսությունների տրամադրվել է դրամական օգնություն՝ բնակարանների վարձակալության ծախսերը հոգալու համար:



2,073 տեղահանված անձ օգտվել է ՄԱԿ ՓԳՅ-ի գործընկեր «Առաքելություն Չայաստան» ՀԿ-ի կողմից տրամադրված սոցիալական ապահովության ծառայություններից (522 անձ, որոնք տեղահանվել են ԼՂ հակամարտության հետևանքով, և մտահոգության ներքո գտնվող 1,551 այլ անձ):



587 տեղահանված անձ առողջապահական ծառայություններ է ստացել ՄԱԿ ՓԳՅ-ի գործընկեր «Առաքելություն Չայաստան» ՀԿ-ի կողմից:



116 տեղահանված անձ իրավական խորհրդատվություն և օգնություն է ստացել ՄԱԿ ՓԳՅ-ի գործընկեր «Առաքելություն Չայաստան» ՀԿ-ի կողմից:

**NFI**

10,559 անձ, տեղահանված ԼՂ հակամարտության հետևանքով, բնաիրային օգնություն է ստացել առաջնային կարիքների բավարարման համար, ներառյալ հիգիենայի հետ կապված կարիքները:



ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- **41 տեղահանված երեխայի** տրամադրվել է հատուկ դեպքերի մասնագիտացված վարում ՄԱԿ ՓԳՅ-ի գործընկերների՝ «Հայկական Կարմիր խաչի ընկերության» և «Վորլդ Վիժն Չայաստան»-ի կողմից:
- **154 տարեց և հատուկ կարիքներ ունեցող անձանց** աջակցություն է ցուցաբերվել ՄԱԿ ՓԳՅ-ի գործընկեր «Վորլդ Վիժն Չայաստան»-ի կողմից: Սահմանն ապօրինաբար հատած ապաստան հայցողների համար ապաստանի ընթացակարգերն արագացնող իրավական փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո տեղահանված անձանց, համապատասխան պետական մարմինների, Հանրային պաշտպանի գրասենյակի և ՄԱԿ ՓԳՅ-ի այլ գործընկերների շրջանում տարածման նպատակով մշակվել են օգտագործողի համար հարմար տեղեկատվական նյութեր:



ԱՊԱՍՏԱՆ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ

- ԼՂ հակամարտության հետևանքով տեղահանված անձանց հյուրընկալող **28 ընտրված ժամանակավոր կացարաններից** 11-ը վերանորոգվել/ արդիականացվել են այս տարի: Ակնկալվում է, որ այլ վերանորոգման աշխատանքները, որոնք ֆինանսավորվում են Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ճապոնիայի և ՄԱԿ-ի Արտակարգ իրավիճակներին արձագանքման կենտրոնական հիմնադրամի (CERF) կողմից, կավարտվեն հաջորդ եռամսյակում: Կացարանի հետ կապված այս միջոցառումների շահառու է մտահոգության ներքո գտնվող շուրջ 980 անձ:

Գործընկերային աշխատանք

- ՄԱԿ ՓԳՑ հայաստանյան գրասենյակը, որը գործում է ՄԱԿ-ի Չայաստանի թիմի շրջանակներում, համագործակցում է պետական և ոչ պետական շահագրգիռ կողմերի հետ: ՄԱԿ ՓԳՑ-ն ՄԱԿ-ի միջգործակալական համակարգման հարթակների և մեխանիզմների անդամ է: ՄԱԿ-ի հայաստանյան թիմի հետ համատեղ՝ այն նպաստում է Չայաստանում 2030 թ. Կայուն զարգացման օրակարգի իրականացմանը՝ ՄԱԿ-ի ԿԶ համագործակցության 2021-2025 թթ. շրջանակի միջոցով:
- 2020 թ. ԼՂ հակամարտության պատճառով տեղահանված անձանց զանգվածային ներհույսից հետո ՄԱԿ-ի հայաստանյան թիմը ստեղծել է համակարգման մի ճկուն կառույց՝ ՄԱԿ ՓԳՑ-ի և ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակի համատեղ ղեկավարման ներքո: Համակարգող կառույցը կենտրոնացած է չորս մարդասիրական աշխատանքային խմբերի (ԱԽ), ինչպես նաև Վաղ վերականգնման հինգերորդ ԱԽ-ի շուրջ՝ ուժեղացնելու ինչպես փախստականների նման իրավիճակում գտնվող բնակչության, այնպես էլ ընդունող համայնքների դիմակայունության կարողությունները: ՄԱԿ ՓԳՑ-ն ղեկավարում է Պաշտպանության ԱԽ-ն ու Կացարանի և ոչ պարենային ապրանքների (ՈՊԱ) ԱԽ-ն, ինչպես նաև համաղեկավարում է Դրամական օգնության ենթաաշխատախումբը:

Ֆինանսական տեղեկություններ

2021 թվականին ՄԱԿ ՓԳՑ հայաստանյան գրասենյակը փորձում է հայթայթել **15.4 միլիոն ԱՄՆ դոլար**՝ փախստականի նման իրավիճակում հայտնված անձանց կարիքներին արձագանքելու և կանոնավոր տարեկան ծրագրի իրականացման համար: **Միջգործակալական արձագանքման ծրագրի** ֆինանսական պահանջները կազմում են **62.1 միլիոն ԱՄՆ դոլար**:

ՄԱԿ ՓԳՑ-ն երախտապարտ է նվիրատու կառույցներին, որոնք իրենց ներդրումն են ունեցել 2021 թ. Չայաստանում իր ծրագրերի ֆինանսավորման գործում.

Չայաստան | Եվրոպական միություն (ECHO) | Ճապոնիա | Ռուսաստանի Դաշնություն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | ՄԱԿ CERF | GAP Inc. | UPS Corporate

ՄԱԿ ՓԳՑ-ն նաև շնորհակալություն է հայտնում դոնոր կառույցներին, որոնք տրամադրել են ավելի քան 10 միլիոն ԱՄՆ դոլարի չափով առանց նախապայմանների ներդրումներ 2021 թ. իր գլոբալ ծրագրին.

Նորվեգիա | Շվեդիա | Իսպանիա, մասնավոր դոնորներ | Նիդեռլանդներ | Դանիա | Կորեայի Հանրապետություն, մասնավոր դոնորներ | Միացյալ Թագավորություն | Գերմանիա | Ճապոնիա, մասնավոր դոնորներ | Ճապոնիա | Ֆրանսիա | Շվեյցարիա | Իտալիա, մասնավոր դոնորներ | Շվեդիա, մասնավոր դոնորներ | Իռլանդիա | Բելգիա | Իտալիա

Առանց նախապայմանների հատկացված միջոցները որևէ սահմանափակմամբ չկաշկանդված գումարներն են, որոնց շնորհիվ ՄԱԿ ՓԳՑ-ն հնարավորություն է ստանում ճկուն կերպով օժանդակելու մտահոգության ներքո գտնվող՝ ծայրահեղ կարիքավոր եւ վտանգված բնակչությանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել [UNHCR Operational Data Portal](#)

ՄԱԿ ՓԳՑ հայաստանյան գրասենյակ, Ռասել Ֆրեյզեր, արտաքին կապերի պատասխանատու, fraser@unhcr.org

ՄԱԿ ՓԳՑ Եվրոպայի տարածաշրջանային բյուրո, Դելֆին Կրեսպեն, դոնորների հետ կապերի համակարգող,

crespin@unhcr.org